ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

(Ծննդյան 60-ամյակի առթիվ)

1980 թ. մայիսի 5-ին լրացավ Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս Բարտուղար Գևորգ Բագրատի Ղարիբջանյանի ծննդյան 60 և գիտահետազոտական ու հասարակական գործունեության 40 տարին:

Հանրագումարի բերելով Գ. Բ. Ղարիբջանյան պատմագետի գործունեությունը, ակնհայտորեն տեսնում ենք նրա հետազոտությունների գլխավոր ուղղությունները՝ հայ ժողովրդի հեղափոխական շարժումների պատմությունը, հայ և անդրկովկասյան ժողովուրդների յենինաբանությունը. Լենինի դերն այդ ժողովուրդների հեղափոխական շարժումների կազմակերպման ու ղեկավարման գործում, նրանց ազատագրման ու վերածննդի պատմության մեջ. հայ հեղափոխական գվարդիայի ականավոր ներկայացուցիչների և հասարակական գործիչների մասնակցությունն ու դերը ռուսական երեք հեղափոխությունների մեջ, նրանց ավանդը հեղափոխության հաղթանակի պայքարում. հայ հասարակական մտքի պատմությունը, ռուս առաջադիմական հեղափոխական մտքի բարերար ազդեցությունը հայ հասարակական մտքի զարգացման վրա, ՍՄԿՊ և ՀԿԿ պատմության մի շարք հարցերի լուսաբանում:

Դեռևս 1941 թ., լինելով Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանող, Ղարիբջանյանը հանդես է բերում գիտահետազոտական հակումներ. գրում է Ալեքսանդրապոլի 1917 թ. հեղափոխական շարժումների մասին իր առաջին աշխատությունը, որը նույն տարում տպագրվում է Երևանի պետհամալսարանի ուսանողների գիտական աշխատությունների ժողովածուում: 1948 թ. Ղարիբջանյանը պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա, հրատարակում իր առաջին ուսումնասիրությունները, նվիրված հայ ժողովրդի նոր և նորագույն ժամանակների սոցիալական և ազգային ազատագրության պատմության պրոբլեմներին՝ «Պայքար Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի համար», «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և հայ ժողովրդի ազատագրումը», «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ.», «Մեծ հոկտեմբերը հայ ժողովրդի ազատարարն է» և այլն: 1955 թ. Գ. Բ. Ղարիբջանյանը պաշտպանում է դոկտորական դիսերտացիա «Հայաստանի Կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում» թեմայով, որը հրատարակվել է հայերեն և ռուսերեն. Այդ մենագրությունը ընթերցողին ներկայացնում է Հայաստանի սոցիալ-անտեսական և քաղաքական կացությունը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, ցույց տալիս սոցիալիստական հեղափոխության նշանակությունը հայ ժողովրդի պատմական հակատագրի մեջ, նրա ազգային և սոցիալական ազատագրման գործում: Դրան հաջորդած պատմագիտական նոր ներուզոտություններում Ղարիբջանյանը շարունակում է հայագիտության, կովկասագիտության, մասնավորապես հայ ժողովրդի պատմության լուսաբանումը տարբեր ասպեկտներով:

Դ. Բ. Զարիբջանյանի գիտահետազոտական ուսումնասիրությունների մեջ առաջնակարգ տեղ է գրավում Հայաստանի և ողջ Անդրկովկասի ժողովուրդների ազատագրման, նրանց մոտ սովետական պետականության ստեղծման գործում Վ. Ի. Լենինի դերի բազմակողմանի լուսաբանումը: Այդ պրոբլեմի տարբեր հարցերին են նվիրված նրա մի շարք ծավալուն ուսումնասիրություններ՝ «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրումը», «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորումը», «Վ. Ի. Լենինը և Բաքվի կոմունան», «Վ. Ի. Լենինը և հայ գործիչները» և այլն:

Զարիբջանյանը մանրակրկիտ աշխատանք է կատարել Վ. Ի. Լենինի արտասահմանյան տարեգրության մեջ գտնված ժամանակաշրջանի գործունեության ընթացքում Անդրկովկասին և Հայաստանին առնչված հարցերն ուսումնասիրելու ուղղությամբ, գրել և հրատարակել է «Վ. Ի. Լենինի ղեկավարությունը Կովկասի բոլշևիկների արտասահմանյան գործունեությանը», «Վ. Ի. Լենինը և ՌՍԴԲԿ II համագումարի կովկասյան պատգամավորները», «Վ. Ի. Լենինը Շվեյցարիայում էմիգրացիայի տարիներին», «Լեհաստանի լենինյան վայրերում», «Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրումը», «Վ. Ի. Լենինի հանդիպումները և նամակագրությունը Կովկասի բոլշևիկների հետ» և այլ գործեր, որոնց մեջ բերված են պատմական վավերագրեր մեծ առաջնորդի կյանքի ու գործունեության և կովկասցի գիտնականների ու աշակերտների հետ նրա ունեցած կապերի ու համագործակցության մասին: Այդ առանձին ուսումնասիրություններ հանդիսացան յուրատեսակ հետազոտական աշխատանքներ, որոնց հրապարակումից հետո Զարիբջանյանը ստեղծեց ընդհանրացնող աշխատությունների շարք, առաջինը «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները (1893—1924)» մենագրությունն էր, որի մեջ օգտագործվել են ոչ միայն Մոսկվայի, Լենինգրադի, Քաքվի, Թբիլիսիի, Երևանի, Դոնի-Ռոստովի, Ուլյանովսկի, այլև Լեհաստանի միացյալ բանվորական կուսակցության պատմության ինստիտուտի, Վարշավայի, Պորոնինոյի, Լայպցիգի, Պրագայի լենինյան տուն-թանգարաններում և Ժենևի համալսարանի հավաքածուում պահպանված Լենինին վերաբերող նյութերը:

Գիտական շրջանառության մեջ դրված նորահայտ տվյալների հիման վրա լուսաբանվել է Վ. Ի. Լենինի դերը Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների ստեղծման, նրանց շարքերի համախմբման ու ազգային կոմունիստական կադրերի առեցման գործում: Այդ մենագրության վերամշակված և լրացված տարբերակը ռուսերեն հրատարակեց Մոսկվայի ՍՍՀՄ բաղամական գրականության հրատարակչությունը՝ լայն ընթերցողներին ներկայացնելով հարուստ նյութ Անդրկովկասում լենինյան գաղափարական, կազմակերպական և տակտիկական սկզբունքների հաղթանակի մասին: Մենագրությունը բարձր գնահատականի արժանացավ սովետական գիտնականների շրջանում և կուսակցական-սովետական մամուլում: Այսպես, 1968 թ. «Պրավդա» թերթում տպագրված գրախոսական հոդվածում նշվեց այն հանգամանքը, որ Դ. Զարիբջանյանի «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները» աշխատության մեջ լայնորեն օգտագործված են մեծ բանակության հայտնի նյութերի հետ միասին նաև մինչև օրս չհրապարակված բազմաթիվ փաստաթղթեր, որոնք թրնուրագրում են Վ. Ի. Լենինի կապերը Անդրկովկասի հետ, նրա հեղափոխական ամբողջ գործունեության ընթացքում, նրա դերը Երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծման, զարգացման ու սովետական կարգերի հաղթանակի և ամրապնդման համար Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի աշխատավորների մղած պայքարի ղեկավարման գործում» («Պրավդա», 1968 թ. № 136):

Դ. Բ. Զարիբջանյանը ստեղծեց «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասը» եռահատոր կապիտալ աշխատությունը (հատ. I. 1970, հատ. II. 1973, հատ. III. 1975, Երևան, «Հայաստան» հրատ.): Այդ հատորներում ընդարձակվեցին հեղինակի նախորդ ուսումնասիրությունների ընդգրկումները, բազմազան և բազմաբնույթ նյութերով վեր հանվեցին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ժողովուրդների ազատագրական պայքարի ընդհանրությունները ու առանձնահատկությունները, լենինյան գաղափարների մարմնավորումը Անդրկովկասի ազգերի կյանքում: Ցուցադրելով և ընդարձակելով հայ և անդրկովկասյան մյուս ժողովուրդների լենինասպատումը, պատմագիտա-գիտնականը գրեց նաև ծավալով ոչ այնքան մեծ, բայց բովանդակությամբ կարևոր ուսումնասիրություններ ու կենսագրական ակնարկներ, որոնք ներկայացնում են լենինյան գվարդիայի ականավոր հեղափոխական գործիչների մի համաստեղություն: Այդ ուսումնասիրությունների մեջ ներկայացված են Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ի. Լայայանցի, Բ. Կնունյանցի, Ալ. Մյասնիկյանի, Վ. Կասպարովի, Ս. Տեր-Պետրոսյանի (Կամոյի), Պ. Աբվելյանի, Ստ. Ալանվերդյանի և Լենինի ուրիշ հավատարիմ աշա-

կերտների ու հետևողների կերպարները, նրանց արժանի ավանդը հեղափոխության հերոսական պատմության մեջ:

Ղարիբջանյանը գլխավորում է ՀՍՍՀ ԴԱ նախագահությանը առընթեր արտասահմանյան գաղափարական հոսանքների պրոբլեմային խորհուրդը և ՍՍՀՄ ԴԱ միջազգային բանվորական և ազգային-ազատագրական շարժումների պատմության կոմպլեքսային պրոբլեմի գիտական խորհրդի հայկական սեկցիան:

Ակադեմիկոս Գ. Բ. Ղարիբջանյանի գիտական գործունեության կարևորագույն բնագավառներից է պատմա-կուսակցական գիտությունը: Նրա գործուն մասնակցությամբ գրվել են *«Очерки истории коммунистических организаций Закавказья»* կոլեկտիվ մենագրությունը, Մոսկվայում հրատարակված *«Многонациональное советское государство»* հատորը և Թիֆլիսում հրատարակված *«Деятельность коммунистических организаций Закавказья по интернациональному воспитанию трудящихся»* գիրքը, որոնց էջերում քննվել են լենինյան կուսակցության անդրկովկասյան ջոկատների կազմավորման և զարգացման պատմությունը և արդի գործունեությունը, ՍՄԿԿ և սովետական պետության ազգային ծրագրերի իրագործման արդյունքները և ժամանակակից ազգային քաղաքականության ակտուալ խնդիրները:

Գ. Բ. Ղարիբջանյանը «Ուրվագծեր Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության» գրքի առաջին հրատարակության նախաձեռնողն ու հեղինակներից մեկն է: Այդ գիրքը հիմք հանդիսացավ հետագա հրատարակությունների, որոնց հեղինակային կոլեկտիվի անդամներից և խմբագիրներից է հոբելյարը: Նա գրել է նաև աշխատություններ նվիրված միջազգային կոմունիստական և բանվորական շարժմանը, նրա շատ ականավոր ներկայացուցիչների գործունեությանը (Ֆրիդրիխ Էնգելս, Կարլ Լիբկնեխտ, Ռոզա Լյուքսեմբուրգ, Էռնստ Թելման, Գեորգի Դիմիտրով, Անտոնիո Գրամշի, Յուլիուս Ֆուչիկ և ուրիշներ):

Այսպիսով, գիտական աշխատանքի իր ընտրած բոլոր ուղղություններում էլ Գ. Բ. Ղարիբջանյանի գործունեության համար բնորոշ է պատմագիտական առավել ակտուալ պրոբլեմների ընտրությունը, նրանց մանրակրկիտ ուսումնասիրությունը և վերլուծությունը, մարքսիստական-լենինյան մեթոդոլոգիայի ու կուսակցականության հետևողական կիրառումը: Շնորհիվ այդ ամենի, նրա գիտական հետազոտություններ հարստացրել են սովետահայ պատմագիտությունը, բռնել են ժամանակի քննությունը և որոշակի դեր են խաղում ժամանակակից սերնդի կոմունիստական դաստիարակության գործում:

Տարբեր տարիների ընթացքում Գ. Բ. Ղարիբջանյանը իր հոդվածներում և ուսումնասիրություններում անդրադարձել է նաև հայ ազատագրական շարժման պատմության հարցերին, այդ շարժման մի շարք գործիչներին՝ Անդրանիկ Օզանյանին, Մարո և Ավետիս Նազարբեկյաններին և այլոց, քննության է առել հայ հասարակական-քաղաքական կուսակցությունների ծրագրերը և գործունեությունը: Նա միաժամանակ հոդվածներ է նվիրել մեծ հեղափոխական դեմոկրատներ Ն. Գ. Չերնիշևսկուն, Միքայել Նալբանդյանին, հայ հասարակական-քաղաքական հոսանքների պատմության հարցերին:

Գ. Ղարիբջանյանը Հայաստանի սովետական գրողների միության անդամ է: Նա գործուն մասնակցություն է ունեցել հանրապետության գրական-գրականագիտական կյանքին, հրապարակել է պատմաբանասիրական և գրականագիտական մի շարք ուսումնասիրություններ, գրել է հոդվածներ հայ-ռուսական գրական կապերի և հարակից մի շարք այլ հարցերի մասին:

Գիտական-հետազոտական աշխատանքներին զուգահեռ Գ. Բ. Ղարիբջանյանը ծավալել է գիտամանկավարժական, հասարակական և կուսակցական-պետական գործունեություն: 1947 թ. նա դասախոսել է կուսակցական դպրոցում և ուրիշ ուսումնական հաստատություններում, հազարավոր ուսանողների սովորեցրել է մարքսիստական-լենինյան տեսությունը, պատրաստել է բարձրորակ կադրեր, որոնք հաջողությամբ աշխատում են ժողովրդական տնտեսության և մշակույթի տարբեր բնագավառներում:

1968 թ. Գ. Բ. Ղարիբջանյանը ստանձնում է ՀԿԿ Կենտկոմի կուսակցության պատմության ինստիտուտի՝, ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի դիրեկտորի պաշտոնը: Շուրջ 10 տարի աշխատելով այդ բնագավառում, նա զգալի գործ կատարեց կուսակցության պատմության գիտահետազոտական ուսումնասիրության ուղղությամբ: Նրա անմիջական ղեկավարությամբ ավարտվեց Վ. Ի. Լենինի երկերի 4-րդ հրատարակության վերջին հատորների և 5-րդ լիակատար ժողովածուի առաջին հատորների հայերեն թարգմանությունն ու հրատարակությունը:

1977 թ. հուլիսից Դ. Բ. Ղարիբջանյանը աշխատում է որպես ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ԳԱ նախագահության անդամ:

Գիտական և գիտամանկավարժական բեղմնավոր գործունեությունը Դ. Բ. Ղարիբջանյանը հաջողությամբ զուգորդել է կուսակցական և պետական աշխատանքի հետ: Ուսանողական նստարանից, 1941 թ. նա մեկնել է սովետական բանակի շարքերը, անցել զինվորական ուսումնարանի դասընթացը, որպես դասակի հրամանատար մասնակցել է Սմոլենսկի շրջանում մղված մարտերին, վիրավորվել, հետագայում մինչև 1948 թ. աշխատել է ռազմանակատային, ապա՝ զինվորական մամուլում:

Հետպատերազմյան տարիներին եղել է Հայաստանի լենինյան կոմերիտմիության կենտկոմի քարտուղար և ջանք չի խնայել երիտասարդության դաստիարակության համար: Առաջ քաշվելով ղեկավար աշխատանքի ՀԿԿ Կենտկոմում, Դ. Բ. Ղարիբջանյանը երկար տարիներ վարել է Կենտկոմի բաժնի վարիչի տեղակալի, ապա՝ վարիչի պաշտոնները, ցուցաբերելով մեծ եռանդ կուսակցության առաջադրանքները կատարելու համար:

1960—1968 թթ. Դ. Ղարիբջանյանը եղել է ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար, մեծ ջանքեր թափել քաղաքի կուսակցական կազմակերպության ուժերը համախմբելու, տնտեսական ու կուլտուրական շինարարության խնդիրները իրագործելու համար: Նա ընտրվել է ՍՄԿԿ XXII և XXIII համագումարների պատգամավոր, ՍՍՀՄ Գերագույն սովետի 6-րդ և 7-րդ գումարումների դեպուտատ, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ:

Դ. Բ. Ղարիբջանյանը եղել է Հայաստանի կոմկուսի հետպատերազմյան բոլոր համագումարների պատգամավոր: 1954 թ. ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի կազմում, իսկ 1965—1969 թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի բյուրոյի անդամության թեկնածու:

Իր մարտական և աշխատանքային ծառայությունների համար Դ. Բ. Ղարիբջանյանը պարգևատրվել է կառավարական շքանշաններով և մեդալներով: 1980 թ. ապրիլի 30-ին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով պատմագիտության բնագավառում ունեցած վաստակի և ծննդյան 60-ամյակի կապակցությամբ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Դ. Բ. Ղարիբջանյանը պարգևատրվել է Ժողովուրդների բարեկամության շքանշանով:

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, պրոֆեսոր Դ. Բ. Ղարիբջանյանը գտնվում է իր ուժերի ծաղկման շրջանում: Նրան այսօր գրաղեցնում են հայ և Անդրկովկասի եղբայրական մյուս ժողովուրդների պատմության նոր և կարևոր ճարքեր: Ցանկանանք մեր հոբելյարին նոր հաջողություններ իր գիտական-ստեղծագործական աշխատանքներում:

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ն. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ